

# ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ

*Posted on September 9, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



## **Լիլիա Ապրեսյան, Ամալիկ Բաղդասարյան**

### **Մարզերի երեխաները մարզերում (MEM), 6 Սեպտեմբեր 2021**

Գիտակցական տարիքում մարդը սկսում է բախվել հոգեբանական, ֆիզիկական, զգացական և մտավոր խնդիրների հետ: Այդ ժամանակ է, որ առաջ են գալիս հանրույթում ունեցած դերերը, խնդիրները, ինչպես նաև այն, ինչ մենք կոչում ենք հաջողություն:

Մենք սկսում ենք վերլուծել տարբեր երևույթներ, խնդիրներ, գտնել դրանց արմատները և ազդեցությունը թե՛ մեզ, թե՛ մեր շրջապատի վրա: Այս ամենին մենք հասնում ենք՝ ունենալով գիտելիքի որոշակի մակարդակ, որը կա՛մ մեզ բավարարում է այդ պահի համար, կա՛մ մենք զգում ենք պակաս և փորձում լրացնել դա:

Դեռևս երեխա ժամանակ մենք ձգտում ենք դեպի լավագույնը: Մենք մարզվում ենք, կարդում ենք, հաճախում տարբեր խմբակներ և փորձում բարձրանալ կյանքի աստիճաններով: Բայց արդյո՞ք մենք մեր կյանքում եղած գիտելիքի պաշարը լցնում ենք բոլոր գործոններից ստացած գիտելիքներով: Իրականում, մեր ուղեղը մագնիսի պես ձգում է այն, ինչ մեզ հետաքրքրում է, հետևաբար մենք ձեռք ենք բերում նախասիրություններ և նախընտրում ենք այս կամ այն թեման ու մասնագիտությունը:

Սկսվում է ինքնակրթության շրջանը: Որքան էլ դպրոցը, համալսարանը կամ առհասարակ որևէ ուսումնական հաստատություն մեզ տալիս է որոշակի գիտելիք, մեզ կյանքում առաջ մղողը ինքնակրթությունն է:

Հիմա դիտարկենք մեկ օրինակ.

Ես գիտեմ, որ կա օվկիանոս և կան ձկներ: Դա ինձ սովորեցնում են դպրոցում:

Երբ ես բացում եմ համակարգիչը և տեսնում եմ որևէ ձկան նկար, փնտրում եմ անունը և ամենաքիչը կարդում եմ երկու տող նրա մասին: Սա ինքնակրթությունն է:

Կարելի է ասել, որ ուսումնական հաստատությունները մեզ ապահովում են հիմնական (բազային) գիտելիքով կամ պարզապես առաջարկում են «սովորել՝ ինչպես սովորել» մեթոդը, որի միջոցով էլ մենք գնում ենք առաջ և հարստացնում մեր իմացության պաշարը այս կամ այն թեմայի շուրջ:

Երբ խոսքը վերաբերում է կյանքում մեծ հաջողությանը, մենք չենք կարող դա անել առանց կրթության: Որքան էլ որ հետևյալ միտքը ճիշտ է, կրթությունը ոչ միշտ է նշանակում սովորական (ֆորմալ) հաստատություն հաճախելը: Մեր օրերում կան բազմաթիվ ոչ սովորական կրթական հաստատություններ, դպրոցահասակ երեխաների համար՝ արտադասարանական զբաղվածության կենտրոններ, տարբեր կազմակերպություններ, ի իհարկե, համացանցը, որոնց միջոցով կարելի է անվերջ կրթվել:

Ինչպես նշում էր Ալբերտ Էյնշտեյնը՝ «կրթությունը այն է, ինչ մտում է դպրոցում սովորածը մոռանալուց հետո»: Չափահաս կյանքում չկա ուսումնական ծրագիր, որը պարտավորեցնում է մեզ սովորել և առաջադիմել կյանքում կամ գործի ասպարեզում (կարիերայում): Ուստի մենք սկսում ենք ծախսել մեր սեփական ժամանակը և աղբյուրները կամ միջոցները (ռեսուրսները) մեր ոլորտում լավագույնը դառնալու համար: Այս դեպքում ամեն բան կախված է միայն մեզանից:

Ինքնակրթությունը ենթադրում է ընդունել այն, ինչ գիտենք և շարունակենք սովորել այն ինչ չգիտենք: Բայց երբեմն ինքնակրթության ճանապարհին հանդիպում ենք սեփական անձի հետ կապված խնդիրների՝

### **1 Մղում (կամ շարժառիթ) (Մոտիվացիա)**

Ամենամեծ խնդիրը ինքնակրթության ճանապարհին մղումի պակասն է: Որոշ դեպքերում ինքդ քեզ համոզելը և նոր բան սկսելը նմանվում է իսկական լաբիրինթոսի: Մենք անընդհատ փորձում ենք ինքներս մեզ համոզել, վեր կենալ ու մեկ ժամ տրամադրել ընթերցանությանը, որևէ տեսահոլովակի դիտմանը:

Այս դեպքում օգնության կարող են գալ օրվա ծրագրավորման գործիքները: Երբ նախօրոք կազմված գործողությունները ավարտելուց հետո ինքդ քեզ պարզևատրում ես մի կտոր կարկանդակով, մեկ ժամ հանգստով և այլն, մղումը սկսում է գործել:

### **2 Ժամանակի կառավարում**

Սա ևս ինքնակրթության ճանապարհին հանդիպող ամենամեծ խնդիրներից է: Երբ մենք սկսում ենք որևէ բան անել, կորցնում ենք ժամանակի զգացումը:

- Մեկ ժամից կհասնեմ տուն և կկարդամ գիրքը:
- Այս մեկն էլ նայեմ ու կվերջացնեմ:
- Մի անգամ նայեմ ինչ կա համացանցում ու շարունակեմ:
- Մի բաժակ սուրճ խմեմ ու վերադառնամ:

Կարևոր է հասկանալ ինչն է առաջնահերթ: Օրվա գործերը ծրագրավորելիս կարելի է առաջնորդվել հետևյալ դասակարգմամբ՝

\*\*\*\* Շատ կարևոր

\*\*\* Կարևոր

\*\* Պակաս կարևոր

\* Կարելի է հետաձգել:

Այսպես դուք կհասկանաք, թե ո՞ր գործը պետք է նկատել առաջնահերթ:

### 3 Ճկունություն

Այս դեպքում հիմնականում ժամանակի և տարածության մեջ ճկունության գաղափարը իր մեջ ներառում է վերոնշյալ երկու կետերը: Ճկունությունը ենթադրում է կարողանալ արագ կողմնորոշվել, գտնել անհրաժեշտ նյութը, կառավարել փափուկ հմտությունները: Վերջերս ճկունություն է նաև առցանց կամ ոչ առցանց մասնակցությունը տարբեր միջոցառումների և նախագծերի:

Հատկապես համավարակի պայմանները մեզ ցույց տվեցին, որ աշխարհը պարզապես կդոփեր տեղում առանց համացանցի գոյության: Մի շարք ընկերություններ, ուսումնական հաստատություններ անցան հեռավար ձեվաչափի ամբողջ աշխարհում: Աշխարհի լավագույն համալսարաններից համարվող Հարվարդը, Լոնդոնի համալսարանական քոլեջը, Մասսաչուսեթի տեխնոլոգիական ինստիտուտը և բազմաթիվ այլ հաստատություններ այսօր էլ դեռ շարունակում են առաջարկել առցանց դասընթացքներ, որոնք կարելի է անցնել աշխարհի ցանկացած կետից:

Ի վերջո, համացանցը լիքն է տեսադասերով, գրքերով, որոնք ինքնակրթության ճանապարհին պետք կգան բոլորին: Պարզապես պետք է երեխաներին, և երիտասարդներին օգնել, թե ինչպես ճիշտ օգտվեն 21-րդ դարի միջոցներից, տնօրինեն իրենց ժամանակը խելամիտ կերպով: Իրականում, հաջողակ մարդկանց մեծ մասը պարզապես գերազանց ընթերցողներ են: Ինչպես ասում են, լավագույն առաջնորդները հավատարիմ ընթերցողներ են:

Այս ամենին հասնելու համար պետք է պատասխանատվություն վերցնել այն հանրույթի հանդեպ, որի մի մասը մենք ենք: Թեկուզ օգնելով մեր ընկերներին, հարազատներին՝ մենք կարող ենք փոխել մշակույթ, բարձրացնել պատասխանատվությունը և մեր միջավայրը դարձնել ավելի խելացի, գիտելիքահեն և գիտական միտք արտադրող, նպատակասլաց և բարձունքի ձգտող:

**Ինքնակրթությունը նախևառաջ սկսվում է ինքդ քո հանդեպ պատասխանատվությունից:**

**There are no comments yet.**